Հաստատում եմ

Երևանի տետական համալսարանի
պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

# ԱՍՏԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

ԵՊՀ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ — Պ. Գ. Դոկտ. Անուշավան Եպս. Ժամկոչյան

Աստվածաբանության ֆակուլտետի

2015-2016թթ ուստարվա ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական

քննության հարցաշար

1. «Ընդհանուր եկեղեցական պատմություն» առարկան, մեթոդները, կառուցվածքը:
2. Անգլիկան եկեղեցու ձևավորումը և դավանաբանական առանձնահատկությունները:
3. Արիոս և արիոսականություն: Դավանաբանության հիմնական բնութագիրը:
4. Հակաարիոսական պայքարը: Աթանաս Մեծ: Օմիուսականություն:
5. Խաչակրաց IV արշավանքը և Լատինական կայսրության ու պատրիարքության ստեղծումը: Միարարական քաղաքականություն:
6. Հուստինիանոս Մեծի կրոնական քաղաքականությունը: «Երեք կետերի մասին» էդիկտը: Օմոլոգիան: 553թ. «Տիեզերական» ժողովը:
7. Պապական Հռոմի և Կ. Պոլսի պատրիարքության կացությունը XI դարասկզբին: 1054 թ. Մեծ Սխիզմը և դրա կանոնական ու դավանաբանական պատճառները: «Filioque»-ի տեսությունը:
8. Ուղղափառ եկեղեցիների կազմավորման կանոնական սկզբունքները: Անկախ (ավտոկեֆալ) և ինքնավար (ավտոնոմ) ուղղափառ եկեղեցիներ: Ուղղափառության դավանաբանությունը և պաշտամունքը:
9. Արևմտյան եկեղեցու ներքին կացությունը XI-XIII դարերում: Կլյունիստական բարենորոգչական շարժումը: Գրիգոր VII: Օտտոնյան կրոնական քաղաքականությունը:
10. Խաչակրաց արշավանքների ձևավորման հոգևոր, հասարակական նախադրյալները:
11. Կլերմոնի ժողովը: Արևմտյան հոգևոր-ասպետական միաբանությունների ձևավորման պատճառները և նպատակները:
12. Նախառեֆորմացիոն շարժումը: Ջոն Վիկլիֆ: Յան Հուս: Ռեֆորմացիոն շարժման հոգևոր և հասարակական հիմքերը: Նրա լիբերալ և արմատական հոսանքները:
13. Եկեղեցական վեճերը պապաշխարանքի, կրկնամկրտության և Քրիստոնեական Զատկի հարցի շուրջ:
14. Քրիստոնեությունն իբրև հանդուրժելի կրոն: Միլանի էդիկտը:
15. Կապադովկիական աստվածաբանական դպրոցը և Հայաստանը:

16. Տրիդենտի «տիեզերաժողովի» դեկրետները և «Հավատո հանգանակը»: Պապական ցենզուրան և «արգելված գրքերի ցանկը»: Հակաբողոքական կրթական հաստատությունների գործունեությունը:
17. Վատիկանի II «տիեզերաժողովը» և նրա ունեցած կրոնական, սոցիալ-քաղաքական նշանակությունը: «Ազատագրման» աստվածաբանությունը:
18. Քրիստոնեության տարածումը և պետականացումը Ռուսաստանում: Ռուսական պատրիարքության հիմնումը:
19. Քրիստոնեության տարածումը Վրաստանում, պետականացումը, արդի վիճակը:
20. 449 թ. «ավազակային» ժողովը: Չորրորդ «Տիեզերական» ժողովը և նոր դավանաբանական բանաձևը: Քաղկեդոնի 28-րդ կանոնը:
21. «Հայ եկեղեցու պատմություն» առարկան ընդհանուր եկեղեցական պատմության համակարգում:
22. Առաքելական քարոզչությունը Հայաստանում ըստ վաղ դարձաբանական ավանդույթի:
23. Քրիստոնեության ծավալումը Հայաստանում և հեթանոսության պայքարը նրա դեմ:
24. Քրիստոնեական կրոնի պետականացումը Հայաստանում: Հայ եկեղեցու կազմակերպումն իբրև միասնական կառույց: Գրիգոր Լուսավորիչ և Տրդատ Մեծ:
25. Հայ եկեղեցու հայացումը: Սահակ Պարթև:
26. Գրերի գյուտը և ազգային դպրոցների բացումը Հայքում, Վիրքում, Աղվանքում: Մաշտոցը և թարգմանչաց շարժումը:
27. Քրիստոնեական առաջին համայնքների ձևավորումը և զարգացման հիմնական միտումները: Երուսաղեմի 51 թ. Առաքելական ժողովը:
28. Քրիստոնեության հալածանքները II – IV դդ.: Իրավական հիմնավորումները և հիմնական փուլերը: Հալածանքները Հայքում:
29. Առաջին Տիեզերական ժողովը: Հավատո հանգանակը, կանոնական որոշումները և Հայ եկեղեցու վերաբերմունքը դրանց նկատմամբ:
30. Երկրորդ Տիեզերական ժողովը: Երրորդաբանությունը, հավատո հանգանակը, կանոնական որոշումները և «Նոր Հռոմի» ուսմունքը:
31. Երրորդ Տիեզերական ժողովը և նրա որոշումները: Կյուրեղ Ալեքսանդրացու և Նեստորի հակամարտությունը: Ալեքսանդրիայի և Անտիոքի 433 թ. «միությունը» և հայ եկեղեցին:
32. Հայ եկեղեցին V դարի II կեսին: Հովհան Մանդակունի և Վահան Մամիկոնյան:
33. Հայ եկեղեցու դիրքորոշումը Քաղկեդոնի որոշումների նկատմամբ: Քաղկեդոնական և հակաքաղկեդոնական եկեղեցիներ: Հուլիանական և սևերյան հոսանքները:

34. Պատկերամարտական և պատկերապաշտական շարժման էությունը (787 թ. Նիկեայի «տիեզերաժողովը») և Հայ եկեղեցու դիրքորոշումը:
35. Հայ եկեղեցին ընդհանրական եկեղեցու համակարգում IV-V դդ.: Վերաբերմունքը Տիեզերական ժողովների նկատմամբ:
36. Քրիստոնեության վերջնական հաղթանակը Հայաստանում: Ներսես Մեծ:
37. Հայ եկեղեցու պայքարը հեթանոսական վերապրուկների դեմ: Աշտիշատի ժողովը:
38. Հայ եկեղեցին հասարակական կյանքի կազմակերպիչ պետականության անկումից հետո: Շահապիվանի ժողովը:
39. Հայ -ասորական միություն հականեստորական ճակատում: Դվինի Ա և Բ ժողովները:
40. Հայ եկեղեցին և Հայաստանի երկրորդ բաժանումը:
41. Հայ-վրացական եկեղեցական  պառակտումը:
42. Հայ և բյուզանդական եկեղեցիների միության նոր փորձերը: 632 թ. Կարինի ժողովը և միակամության վարդապետությունը:
43. Հայ եկեղեցու լուսավորչական  առաքելությունը V-VII դարերում:
44. Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները: Պարտավի ժողով:
45. Հայ եկեղեցու հակաաղանդավորական պայքարը V-VIII դարերում:
46. Հայ եկեղեցու ազգայնացումը: Հովհան Օձնեցի:
47. Հայ եկեղեցին արաբական գերիշխանության շրջանում: Սահակ Գ Ձորափորեցի և Եղիա Արճիշեցի:
48. Հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունները IX-X դդ.: Շիրակավանի 862 թ. ժողովը:
49. Հայ եկեղեցին հայկական անկախ պետականության վերահաստատման շրջանում: Զաքարիա Ա Ձագեցի և Գևորգ Բ Գառնեցի:
50. Հայ եկեղեցին Բագրատունիների թագավորության շրջանում (IX-XI դդ.):
51. Հայ եկեղեցին XII դարասկզբին և Աղթամարի հակաթոռ կաթողիկոսությունը: 1114 թ. Կարմիր վանքի ժողովը և կաթողիկոսի ընտրության նոր կանոնակարգի ընդունումը:
52. Միարարական շարժումները Կիլիկյան Հայաստանում: Ներսես Լամբրոնացի:
53. Հայ եկեղեցին 15-րդ դարում: Մայր Աթոռի վերադարձը  ս.էջմիածին:
54. Եկեղեցին և վանական հաստատությունները  X-XIV դարերում:
55. Երուսաղեմի  և  Կ. Պոլսի հայոց պատրիարքությունները:
56. Մխիթարյանների հայ կաթոլիկ միաբանության հիմնադրումը և նրա գիտական ու մշակութային գործունեությունը:
57. Հայ եկեղեցին XIX դարի 30-50-ական թվականներին: Հայ Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիների կազմավորումը և գործունեությունը:

58. Հայ եկեղեցու ազգապահպան գործունեությունը XIX դարի առաջին կեսին: Ներսես Աշտարակեցի:
59. Հայ եկեղեցու իրավական կարգավիճակը ցարական Ռուսաստանում: «Պոլոժենիե» (1836 թ.):
60. Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցին և Գևորգյան հոգևոր ճեմարանի հիմնադրումը:
61. Հայ եկեղեցու ազգապահպան գործունեությունը XIX դարի վերջին և XX դարի սկզբներին: Խրիմյան Հայրիկ:
62. 1903 թ. հունիսի 12-ի օրենքը և Հայ ժողովրդի պայքարը ցարիզմի դեմ:
63. Բարենորոգչական նախաձեռնությունները Հայ եկեղեցում XIX դարի վերջին և XX դարի առաջին քառորդին: Մաղաքիա Օրմանյան:
64. Հայ եկեղեցին  Մեծ Եղեռնի տարիներին:
65. Հայ եկեղեցին առաջին Հանրապետության շրջանում: Գևորգ Ե Սուրենյանց:
66. Հայ եկեղեցին խորհրդային իշխանության առաջին տասնամյակներում: Խորեն Ա Մուրադբեկյան:
67. Հայ եկեղեցին XX դարի 40-50-ական թվականներին: Մեծ հայրենադարձը: Գևորգ Զ Չորեքչյան և Գարեգին Ա Հովսեփյան:
68. Հայ եկեղեցին և սփյուռքահայությունը: Վազգեն Ա Պալճյան:
69. Հայ եկեղեցին և Գարեգին Ա կաթողիկոսը: Ամենայն Հայոց կաթողիկոսության հարաբերությունները Կիլիկյան Աթոռի հետ:
70. ՀՀ «Խղճի ազատության և կրոնական միավորումների մասին» 1991 թ. հունիսի 17-ի օրենքը և Հայ եկեղեցին:
71. Աղթամարի, Սսի, Գանձասարի  կաթողիկոսական աթոռների պատմական ճակատագիրը:
72. Հայկական ինքնությունը և Հայ եկեղեցին արդի աշխարհում:
73. Հայ եկեղեցին և հայոց բռնագաղթը  Շահ Աբասի օրոք:
74. Արդի քրիստոնյա աշխարհը և էկումենիկ շարժումը:
75. Հինդուիզմի ընդհանուր բնութագիրը
76. Ջայնիզմի ընդհանուր բնութագիրը
77. Սիկհիզմի ընդհանուր բնութագիրը
78. Չինաստանի ազգային կրոնները
79. Սինտոյի ընդհանուր բնութագիրը
80. Բուդդայականության առաջացումը և զարգացումը
81. Իսլամի երկու հիմնական ուղղությունների նույնություններն ու տարբերությունները
82. Հուդայական կրոնի կայացման փուլերը և տոնածիսական համակարգը
83. Եգիտական դիցաբանության ընդհանուր բնութագիրը
84. Ասորաբաբելական դիցաբանության ընդհանուր բնութագիրը

85. Հունահռոմեական դիցարանի հաջորդական շերտերը, անցումների որակական ցուցանիշները
86. Եկեղեցական ծիսական գրքերը (Ճաշոց, Գանձարան, Ժամագիրք, Խորհրդատետր, Տոնացույց, Շարակնոց, Հայսմավուրք, Մաշտոց և այլն)
87. Բուն Բարեկենդան: Մեծ Պահք
88. Հայ եկեղեցու խորհուրդները
89. Հայ եկեղեցու տոներ
90. Ս. Պատարագ
91. Կապադովկյան հայրերի երրորդաբանությունը
92. Կյուրեղ Ալեքսանդրացու քրիստոսաբանությունը
93. Ջատագովական և հակաճառական գրականություն
94. Համաքրիստոնեական Տոնացույցի հայկական տարբերակը և նրա նախօրինակը
95. Հայոց Տոնացույցի նոր խմբագրությունը (Հովհան Օձնեցի)
96. Սահակ կաթողիկոսը որպես Հայոց Քրիստոնեական Կանոնագիտության հիմնադիր և «Կանոնագիրք հայոց»-ի ստեղծումը
97. «Կանոնագիրք հայոց»-ի չորրորդ խմբագրությունը՝ իրականացված Հովհան Օձնեցու կողմից
98. Մխիթար Գոշը և նրա «Դատաստանագիրքը»
99. Աստվածաշնչի կանոնը
100. Աստվածաշնչի թարգմանությունները
101. Նոր Կտակարանի կառուցվածքը և համատես ավետարանները
102. Աստվածաբանությունը և մեկնությունը (Ալեքսանդրիայի և Անտիոքի դպրոցներ)
103. Գիրք Պատճառաց՝ մեկնությունների հանրագիտարան
104. Աստվածաշնչի հայ առաջին մեկնիչ Եղիշեն և նրա «Մեկնութիւն Արարածոց»-ը: